




ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 71

17/30 ՀՈՅՆՄԲԵՐ 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Տ Պ Ա Ր Ա Ն

՝ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ,,Ի

Այսուհետեւ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը լոյս պիտի տեսնէ իրեն սեփական տպարանին մէջ: Տպարանս, զոր բազում գոհութեամբ կանգնեց Ամենայ. Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է եւ օր աւուր միշտ պիտի կատարեալագործուի: Արդէն ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար թէ՛ ի Կ. Պոլիս եւ թէ՛ գաւառներէ գիւմարները գահացնելու:

Կը տպուին ամէն տեսակ ժառանգանք, գիրքեր, տետրներ, հրաշխագիրներ, քարտեր, քարտ-տետրներ, մանագրներ եւ., եւ.:

Գիները անմրցելի կերպով աժան են:

Գեղեցիկագիտական ճաշակի եւ տպագրական մաքրութեան կողմանէ եւս յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Կ. Պոլիս, Բերա, 5 Պայրաւ փողոց 5

Սակայն լուսոյ եւ ճշմարտութեան հին ոտին չէր քննարար, այլ արթուն էր, մանաւանդ ըստ բանից Ս. Առաքելոյն եւ կը շրջէր ու կը մոնչէր, թէեւ կը զայրանար ու ջղագրգիւ կը յիմարէր ի տես այն սքանչելի յառաջադիմութեան քայլերուն՝ զորս կ'աւնուէր Ուղղափառ Ս. Հաւատքը՝ անվեհեր ջանիւք արի եւ քաջ արանց գունդին, որք աղղու եւ գործնականապէս անդուլ կ'աշխատէին Կ. Պոլսոյ մէջ։ Եւ չէին փախցնէր առիթները ի դերեւ հանելու Ոստիկն գաղտնի եւ բազմանկեղ հնարքները, եւ ձեռնառու լինել երկնառաք հաւատոյն ծառայման, ի Նախախնամութենէն Սատուծոյ սահմանուած եւ որոշուած այս հաւատարիմ գունդին մէջ էր նաեւ մերս նորադարձ Տէր Կոմիտաս Բէօ-

միւրձեանց Քահանան, աւագերէց Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյն, Ասոնցմէ էր, եւ գլխաւորն, գաղղիական զետպան Յէրբիօլ Մարքէզ, որ կառավարութեան մօտ խորհուրդներ ազդարարելէ չէր դադրեր: Նոյնպէս Լատին հասարակութենէ կրօնաւոր թէ աշխարհիկ քահանաներէն ոչ սակաւք, ինչպէս նաեւ Հայ Ուղղափառներէն Մեծն Մխիթար Արքանայր, որ իւր առաքելական գործունէութեանց փորձերը կատարելէ յետոյ, թըշնամիաց ձեռքէն՝ ողորմութեամբն Աստուծոյ յաջողեցաւ: Զմիւռնիա ապաստանել, զի անոր հոգին տարբեր նպատակի մը համար վերապահուած էր Աստուածային նախատեսութենէ, ուսկից նաեւ կը շարունակէր իւր թղթակցութիւնները Տէր Կոմիտասի հետ, եւ ինչպէս կը կարգացուի Մխիթարայ Արքահօր վարքին մէջ, եթէ չվերահանէր նահատակութիւնը Տեառն Կոմիտասայ Քահանայի, Միաբանութեան անդամակցելու որոշողութիւնը վերջնականապէս տուած էր: Ներկայ էին նաեւ ի մէջ այլոց, Վենետիկոյ Մխիթարեան Միաբանութենէն վերապատուելի Հայր Եղիա եւ Հայր Մանուէլեան վարդապետք, որք նշանաւոր եղան յետ նահատակութեան Տեառն Կոմիտասայ, նիւթ պատրաստելու երեւելի ժամանակադիր՝ Եւդոկիացի Հ. Մատթէոս Վ.ի, որ՝ Մխիթարայ Մեծի Աբայի ձեռնասուն աշակերտ եւ քարտուղարն էր, եւ ժամանակակից Երանելի Տեառն Կոմիտասայ վկային. եւ որ իւր 1708ին գրած ժամանակագրութեան 119րդ էջին մէջ ամենայն երկիւղածութեամբ բովանդակեց երանելոյն թէ՛ վարքն եւ թէ՛ վկայութեան պարագաները:

Արդ այն դժոխային՝ սխրիւմ թշնամին այնպէս մը գրգռեց էջմիածնականաց մէկ մասին ոգին, որ իրենց հասարակութեանը մէջէն դէպի ուղղափառութիւն յառաջդիմող բազմամարտի հոսանքին առաջը առնելու համար չար նախանձ մը սկսաւ գլուխ տալ, ատելութիւն մը Հոռմէական Ուղղափառ հաւատոյ դէմ. հետեւաբար միանգամ ընդմիջող զայն արմատաքի խլելու եւ որրանին մէջ խեղդելու երգուընցան, ինչպէս Հրեայները Քրիստոսի դէմ: Արդէն բաւական ժամանակէ ի վեր Սամաթիոյ Սուլու-Մանասթըրի Ս. Գէորգայ Եկեղեցւոյն Աւագերէցը սկսած էր փուշ դառնալ յաչս իւր չըջակայ դասակից կղերին եւ ձեռնասուն աշակերտացը: Եւ քանզի Տէր Կոմիտասայ բարի եւ անբիծ վարքը, բարձր դիրքն, հրեշտակային ձայնը, ցնահատուած քարոզները, խանդավառ եռանդը, նա մանաւանդ անոր անուրանալի եւ ազատագէմ ու բացարձակ դաւանութիւնն Ուղղափառ Ս. Հաւատոյ, որ արեգակի պէս ճառագայթներ կը սփռէր Հայ որտեղուն խորերը, կը նսեմացնէր զգալապէս՝ չար ոտխէն կրչկանդուած զոմանս յաշխարհականաց, մանաւանդ Քահանայից դասէն, որք ժամանակէ մը ի վեր ատելութեամբ եւ նախանձով մաղձուտած՝ խեթիւ կը հայէին Երանելի Աւագերէցին, գաղսնաբար զինք կը բամբասէին, կ'անգոսնէին, կ'ատէին, եւ իրենց մտերիմներուն մօտ զինք կը վարկաբեկէին՝ կուսակիցներ ստեղծելով ժամանակին զգեստներու,

վրան յարձակելով փարատելու, գիշատելու գինքը. «Զի դժպնի եղեւ մեզ» (Ստակաց. Բ.) :

Մայրաքաղաքիս մէջ, նոյն ժամանակները, էջմիածնական Հայերը՝ բաղդատմամբ Կաթողիկէ Հայոց, բազմաթիւ ըլլալով, Տէր Եփրեմ պաշտօնանկ Պատրիարքը՝ երեք տարիէ վերջ, այսինքն 1701ին, Կաթողիկէ Հայոց գէմ, այնպիսի սաստիկ հալածանք մը յարուցած էր, որ վերոյիշեալ Մեղքիսեղեկ Սուպհի պատրիարքը եւ անոր հետ շատ մը ուրիշ Կաթողիկէ Հայերը մայրաքաղաքէս աքսորել տուած էր (Նմկ. Յնկինդ. Ֆր. Բարիզեան, առ տեղէն. մեծաւորն) : Այդ միջադէպին, Տէր Կոմիտաս քահանայն ստիպուած էր Երուսաղէմ փախչիլ. (Նմկ. Տ. Կոմիտ. առ որդին ի Հռովմ.) : Սակայն եւ այնպէս, Տէր Կոմիտասը հոն ալ խաղաղ ժամանակ չունեցաւ : Օր մը ժողովրդեան մէջէն ունանց՝ Ս. Լիւնն Պապին, եւ Հռովմայ Քահանայապետին հասցէին անէծքներ կարդալուն ներկայ գտնուելով, չկրցաւ հանդուրժել այնքան անարգանաց, եւ զիրենք իսկոյն կշտամբել սկսաւ : Անոնք սակայն վրան յարձակեցան եւ զինք չարաչար հարուածելէ յետոյ, յանդիմանեցան նաեւ սրբապիղծ ձեռօք մօրուքը փետտել. եւ ասով ալ իրենց վայրագութիւնը չկրնալով յագեցնել, զինքը թունաւորել, եւ կամ ուրիշ որ եւ է հնարքով մը սպաննել որոշեցին (վկայութիւն Երուսաղեմայ գործիկ. Հ. Ռափայէլ. 25 Սպրիլ. 1702.) :

Այդ միջոցին՝ էջմիածնական Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռոյ վրայ բազմած էր Երզնկացի Աւետիք Սրբազանը, որ Գաղղիոյ դեսպան Ֆէրրիօ մարքիզին խոստացած էր թէ՛ Սուպհի Պատրիարքը, եւ թէ՛ իրեն հետ ի միասին աքսորուած Հայ Կաթողիկէ հառաքակութեան պատկանող անձինքը ետ դարձնել : Որոյ լուրը Տէր Կոմիտասին սիրտը մխիթարելով, փութացած էր մայրաքաղաքս վերադառնալ : Բայց հազիւ թէ Պոլիս հասաւ, իսկոյն իմացաւ թէ խնդիրը չէր մարած տակաւին, եւ կայծը մոխրոյ տակ կենդանի եւ վառ կը մնար : Խոհեմութիւնը ունեցաւ ուստի վերստին թաքստոց մտնալու, եւ ժամանակ մը եւս հրաժարելու հրապարակ երեւնալէ : Այդ պարագաներու տակ խորհեցաւ դրամի զօրութեամբ վայրկեան մը աղատութիւն վայելել եւ կրած տառապանքները մոռնալ (Նմկ. Տն. Կոմիտ. ի Հռովմ 1703ին) : Սակայն շատ չտեւեց, եւ ահա Ուղղափառաց գէմ նոր հալածանք մ'ալ բորբոքեցաւ, որ սաստկագոյն եւ խստագոյն էր քան զառաջինն :

Եւ ասոր բուն պատճառը այն էր թէ, վերոյիշեալ Աւետիք Պատրիարքը, որ քաղաքական խնդրոյ մը համար 1703 աքսորքի դատապարտուած, եւ ապա ներման արժանանալով Պոլիս վերադարձած էր, Կաթողիկէից թելադրութեամբ — 1706ին — վերստին աքսորուած եւ աքսորանաց վայրէն Գաղղիա անպատանամ ըլլալուն վրայ, էջմիածնականաց ոգին այն տատնան զայրացաւ որ չառ մը Ուղղափառներու

հետ, նոյն իսկ Երզնկացի Մարտիրոս Պատրիարքը՝ որ յաջորդած էր Աւետիքի, աքսորել տուին, եւ փորձեցին ասոնց ընկերացնել նաեւ Տէր Կոմիտասը։ Սակայն, Տէր Կոմիտասը իրեն անձին զէմ լարուած դաւաճանութիւնները լսած ըլլալով իւր մտերիմներէն՝ իր տան մէջ պահուեալ տաճ, ամբողջ տարի մը դուրս չէր ելլեր, եւ իւր պարապ ժամերուն մէջ ամբողջ «Գործք Առաքելոց»ը ոտանաւորի վերածելով, զանոնք ծանօթ ազգայնոց ձեռնտուութեամբ տակի տալով վաճառել կուտար, զինք եւ իւր ընտանիքը պարենաւորելու համար։ Իւր թշնամիք սակայն իրեն այդ թաքստի տեղը իմանալով, մանաւանդ իւր կարգակիցներէն չորս նախանձոտ վատերը գլուխ անցնելով կաշառքով ամէն բան պատրաստելէ յետոյ, վարձուած չորս յանդուգն երիտասարդներով 1707ին բնակած տան վրայ յարձակեցան, եւ դռները փշրելով զինք ձերբակալեցին եւ յանձնեցին Եպարքոսին՝ որ էր երեւելի Զօրութեւ Ալի փաշա, չարախօսելով թէ «սա Ֆրանկ է եւ ուրիշներն ալ Ֆրանկ կ'ընեն»։ Եպարքոսը, աւելի արդար գտնուելով քան հայ եկեղեցականները, երբ մի քանի ուղղափառներու բարի վկայութեամբն Տէր Կոմիտասին վարք ու բարքին նկատմամբ յանցանք մը չգտնալով — որովհետեւ ամբաստանութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ պարզապէս կրօնական խնդիր մը, — թուրքալ երեւցաւ։ չարախօսները սկսան զրպարատութիւններ յերկրել որսը ձեռքէն չփախցնելու համար եւ ըսին թէ «ապստամբ է սերուքեցեան»։ Եպարքոսը զայդ լսելով հարցուց Տէր Կոմիտասին թէ ի՞նչ կ'ըսես։ — «Եւ ազգաւ հայ եմ, պատասխանեց նա, եւ իմ հարցս հաւատք ունիմ, սերուքեան ալ հպատակ եմ, եւ անաւասիկ հարկաբուրդերս»։ Եպարքոսն համոզուեցաւ եւ միւս կողմանէ Աստուծոյ ծառային մատուցած հինգ հարկերէ աւելի հնչիւն դահեկաններու փայլէն չլացած, իրեն ազատութիւն չնորհեց։ (Յակիմը . Բարիզ, կրօն . թուղթ առ գօնթ Բօնթ . չարթրէն . Վալմուր . Հ . Մատթ . Միսիթ . Օպրայ եւն .)։

Եւ այս ազատութիւնը հինգ ամսոյ չափ շարունակեց, որոյ միջոցին հակառակորդ արքունի բարձր հրամանին առջեւ հանդարտելով, առ երեսս հաշտուեցան Երանելոյն հետ եւ առ ժամն ի բաց դրին իրենց նենգութիւնները։ Տէր Կոմիտասին ազատութեան լուրը սակայն ընդհանուր ուրախութիւն պատճառեց։ Զատկական տօները շատ մօտ էին, հետեւաբար ժողովուրդը խանդավառ եռանդեամբ խոնկեցաւ Ս . Գէորգայ եկեղեցին իրենց սիրեցեալ հովուին հմայիչ խօսքերն ունկնդրելու եւ անոր խաղուն ձայնովն ու անուշ եղանակներովը զմայլելու։ Եւ ահա միջադէպ մը պատահեցաւ։ Քահանայք իրարու ձեռքէն աւետարանը խլելով Տէր Կոմիտասին կարգ չէին տար։ սակայն ժողովուրդը, այդ բանին մէջ նկատելով եկեղեցականաց կրքերուն ու ատելութեան վերսալին բորբոքումը, դառնապէս բողոքեց, եւ վերջապէս կարգադրուեցաւ որ Տ . Կոմիտաս կարգայ, որ վերջին աստիճան յուզեց ներկաներուն սիրտը եւ

լացուց զիրենք: Ընդհակառակն քահանայք, ոչ միայն անողգայ մնացին, այլ առաւել զայրանալով չինայեցին օրուան սուրբ յիշատակին, եւ սրտերնուն մէջ սպանութեան վճիռը տուին:

Հոս, տեղն է յիշելու ուրիշ միջադէպ մըն ալ: Յիշեալ սփաւատեւ ազատութեան ժամանակամիջոցին էր, որ Տէր Կոմիտաս Պրուսա գացած էր: Տեղւոյն Առաջնորդը, Սուքիաս եպիսկոպոս, լուսամբիս, խոհեմ, խաղաղասէր, եկեղեցական ուսմանց քաջանմուտ եւ կարող քարոզիչ անձ մըն էր եւ իրեն մեծ բարեկամ: Վերոյիշեալ Առաջնորդը՝ ծր մը կոչունք մը ըրաւ, ուր հրաւիրուած էին հոն տեղի բոլոր քահանաները եւ նշանաւոր աշխարհիկ անձնաւորութիւնք, նաեւ իբրեւ հիւք, Տէր Կոմիտաս քահանան: Հայ ազգիս վաղեմի սովորութեան համաձայն ճաշի միջոցին՝ հրաւիրելոց իւրաքանչիւրին անուան համաձայն երգեր, շարականներ երգուեցան. երբ կարգը Տէր Կոմիտասին եկաւ, բոլորովին յանձնաւորաստից ամէնքը միաբան մարտիրոսաց յատուկ շարականներէն մաս մը երգեցին: Եպիսկոպոսը սակայն ուշադրութիւն կ'ընէր ներկաներուն տեսակ մը այլալուծմին որ իրարու երեսին կը նայէին զարմացումով մը, եւ խոկոյն բացատրեց անոնց, թէ՛ այդ բանը պատահմամբ չեղաւ, այլ խորհրդաւոր եւ գերբնական ազդեցութեամբ, ներշնչմամբ մը եւ պահ մը անբացատրելի լուծիւն տիրեց: Տէր Կոմիտասի Պոլսէն բացակայութիւնը շատ չտեսց, քիչ օրէն Պրուսայէն վերադարձաւ իր պաշտօնին գլուխը. ուր սոյնօրինակ ուրիշ աւելի պայծառ միջադէպ մըն ալ պատահեցաւ ինչպէս աւելի վերջ իր տեղը պիտի պատմենք:

(Շարունակելի)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՆԵՏԱՐԱՆԻ

Փափաքած էինք ի ժամանակին Անեսարաններու մեկնութիւնը եւ քարոյական մերձեցումը կաթի համառօտակի եւ մեր բնի մերք ծալ մեր ընթերցողներուն, խորհելով որ զայժմուս անհրաժեշտ է Ս. Անեսարանի ընթերցումն եւ մանաւանդ խորհրդածութիւնը ընդհանրացնել, ըստ մօտ Ս. Եկեղեցւոյ, այնու մանաւանդ զի գիտեմք քե մեր ժողովուրդն զժրպիտաբար փրկութեան այս գրիկն ըստ կարեւորութեան ընծեցացած է. կը խորհէինք այսպիսով սասարեղ նաեւ ժողովրդապետ ֆահանայից՝ կարճ եւ սեղմեալ նիւթ մասակարարելով իրենց հովուական ֆարգներուն: Սակայն թերթիս հակիրճ ծաւալովը, ստիպողական նիւթերն եւ առ հասարակ մեր կամքն անկախ պատճառներ յարդիւնաւորեցին մեր այս օրինաւոր փափաքը: Այսու հանդերձ զայն գոնէ մասամբ ի գործ ածելու համար, մնալիք եմք մեծ տոկոսով կամ պատշաճագոյն դիպքերու առթիւ Ս. Անեսարանին յարմար կտրները համառօտ մեկնարանել, յիշուած պայմաններով, բացարձակապէս համոզուած ըլլալով որ Բրիտանի Տեսուն մերոյ վարկն ու խօսքն ու գործերը ան-

հրաժեշտ սահմանուած են առաս առաս պտուղներ յոռաչ թերեղ ֆրիսոնեայ ժողովրդեան
մէջ. զի նա միայն ունի Բանս կենաց յալիսեմականաց.

Ներկայիս հեզգիտեց պիտի ցանկ Յիսուսի Ս. Երեմիան յարմար կտրենէր:

*
* *

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

ՓՐԻՉԵՆ ԱՋԳԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

(Մասք. Ա. 1—17.—21 Հմբ. Ղուկ. Գ. 23—36)

1. Յիսուսի ֆրիսոսի Դաւրի որդւոյն, Աբրահամու որդւոյն ծննդեան զիրք: 2. Աբրահամ՝ Իսահակը ծնաւ. Յակովբ Յուդան ու անոր եղայրները ծնաւ: 3. Յուդա՝ Թա-
մարէն ծնաւ Փարէսը եւ Զարան. Փարէս ծնաւ Եգրովը. Եգրովն ծնաւ Արամը: 4. Արամ
ծնաւ Ամիսադաբը, Ամիսադաբ ծնաւ Դաասովը. Դաասովն ծնաւ Սաղովը: 5. Սաղ-
ունովն ծնաւ Բոոսը՝ Հոնեաբէն. Բոոս ծնաւ զՈվբէք՝ Հոնիքէն. Ովբէք ծնաւ Յեսսէն. Յես-
սէն ծնաւ Դաւիթը թագաւորը: 6. Դաւիթ՝ Ուրիայի կնոջմէն ծնաւ զՍողոմոն: 7. Սողոմոն
ծնաւ Բոքովամը. Բոքովամ ծնաւ զԱքիա. Աքիա ծնաւ Ասափը: 8. Ասափ ծնաւ Յովսա-
փաբը. Յովսափաբ ծնաւ Յովրամը. Յովրամ ծնաւ Ոգիան: 9. Ոգիա ծնաւ Յովաբամը.
Յովաբամ ծնաւ Աբազը. Աբազ ծնաւ Եգեկիան: 10. Եգեկիա ծնաւ Մանասէն. Մանասէն
ծնաւ Ամովը. Ամովս ծնաւ Յովսիան: 11. Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրնե-
րը՝ Բաբելոնի գերութեան ժամանակ: 12. Բաբելոնի գերութենէն վերջը, Յեքոնիա ծնաւ
Սաղաբիէր. Սաղաբիէլ ծնաւ Զորաբաբէլը: 13. Զորաբաբէլ ծնաւ Աբիուրը. Աբիուր
ծնաւ Եղիակիմը. Եղիակիմ ծնաւ Ագովը: 14. Ագով ծնաւ Սաղովը. Սաղով ծնաւ
Աֆինը. Աֆին ծնաւ Եղիուդը: 15. Եղիուդ ծնաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մասթանը:
Մասթան ծնաւ Յակովբը: 16. Յակովբ ծնաւ զՅովսէփ՝ Մարեմայ ալը, որուն խօսուած
էր Մարիամ կոյսը. որմէ ծնաւ Յիսուս, որ անուանուեցաւ ֆրիսոս: 17. Արդ անա ա-
մէն սերունդները, Աբրահամէ մինչեւ Դաւիթ՝ ասանուչորս սերունդ. Դաւթէն մինչեւ Բա-
բելոնի գերութիւնը՝ ասանուչորս սերունդ, Բաբելոնի գերութենէն մինչեւ ֆրիսոս՝ ասան-
ուչորս սերունդ:

Ա. 4. Եկեղեցին չորս Աւետարանները իրարմէ որոշելու համար՝ ի հնուց անտի
տովորութիւնը ներմուծեց իւրաքանչիւրին հեղինակին անունը իբրեւ աիտոս կցել ա-
նոր սկիզբը, ըսելով՝ «Ըստ Մասթանի» եւ. այսինքն՝ ինչպէս որ գրուած է ի Մատ-
թէոսէ, ո՛չ վասն տարբերութեան վարդապետութեանը, այլ հեղինակին. յետոյ ա-
ւելցուեցաւ նաեւ տուրք ածականը՝ աստուածային ծագումը ցոյց տալու համար:

2. Մատթէոսի Աւետարանը երեք գլխաւոր մասերու բաժնուած է. Ա. Բրիս-
տոսի ծնունդն ու մանկութիւնը (Գլ. Ա. և Բ.). Բ. Հրապարակական կեանքը. Գ.
Զարչարանքն ու Յարութիւնը: Առաջին գլուխը երկու մասի կը բաժնուի. ա) Բրիս-
տոսի ազգահամարը, որ փառաւոր միութեան-գիծ մը կը կազմէ հին և նոր կտակա-
բանաց միջեւ. բացարձակապէս վաւերական գործ մը՝ պաշտօնական աղբիւրներէ քաղ-
ուած. բ) ծննդեան մանրամասնութիւնները:

3. Գիրք Ծննդեան կ'անհարկէ միայն ազգաբանական ցանկին, զոր հոս կը հիւսէ. և կամ բոլոր ոմանց Սրբոց Հարց ամբողջ գիրքը իր տիտղոսը կ'առնուի ծննդեան որոյ պատմութիւնը կ'առնուի ի սկզբան անդ, ինչպէս Մովսէսի Հնգամատեանին առաջինը՝ Ծննդոցը կ'առնուի «Գիրք սրարածոց» (Ե. 4), անոր համար որ ի սկզբան կը պատմուի ստեղծագործութիւնը:— Պէտք է դիտել նաեւ որ «Գիրք» բառը յերբայականին աւելի ընդարձակ առում ունի և կը նշանակէ ամբողջ կենսագրութիւնը. ուստի «Գիրք Ծննդեան» ըսելով՝ կ'ուզուի նշանակել Քրիստոսի ամբողջ կենաց ու փրկագործութեան պատմութիւնը. քանզի Աստուած մարդ ըլլալով ծնանէլէն վերջը, մնացեալ հրաշալիքը անոր ընական հետեւութիւնն է:— Մատթէոս Աստուածորդոյն ժամանակաւոր ծննդեան վրայ միայն կը խօսի, ենթադրելով աստուածային ծնունդը, որոյ համար Եսայի կ'աղաղակէր. «Քազգաստիմն նորա ո՞ւր անցէ» (Մգ. 5), և որով իր Աւետարանը կը սկսէր արծուէթռիչն Յովհաննէս Աւետարանիչ. «Ի սկզբանէ էր Քանն» (Ա. 1):

4. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի», Փրկչին և Մեհիայի (Օծելոյն, իրբեւ թագաւոր և Քաջանայակետ (Սաղմ. Բ. 2.—Ես. Բ. 2-4. Կա. 4.—Գան. Թ. 25), զոր Մատթէոս իրեն նպատակ ընտրած էր ուսուցանել և ապացուցանել, ոյր վասն և յաճախ կը յիշէ հին Կտակարանի խոստումներն ու մարգարէութիւնները:— «Ողբոյ Դաւթի ողբոյ Աբրահամ»։ Այս երկու մեծ սուրբերը կը յիշէ իսկոյն իրբեւ Քրիստոսի գլխաւոր նախահայրերը. որովհետեւ գլխաւորաբար անոնց խոստացած էր Աստուած զՄեհիա, ինչպէս նաեւ կը հաւատային հրեայք. մին նահապետ, միւսը թագաւոր՝ հարք ազգաց. (Հմմ. Ծնն. ԻԲ. 48. Խթ. 40.—Գաղ. Գ. 47.—Սղմ. Ճա. 44.—Բ. Թագ. Է. 42-46.—Ես. ԺԱ. 4):

5. Դաւիթ սակայն կը նախադրուի Աբրահամու, վասն զի Քրիստոս կը պատկանէր մասնաւորապէս անոր ընտանիքին, իսկ Աբրահամէն սերած հրեական ցեղին՝ ընդհանրապէս. և Դաւիթին եղած խոստումն նորագոյն, մասնաւորապէս և պատուական հազոյն էր. և Դաւիթ՝ Հրէից աւելի հաճելի էր և հուշակեալ, մասնաւորապէս ժամանակի մարդ, հիմնադիր անկորնչելի թագաւորութեան։ Մինչդեռ ժողովուրդը չէր ճշտու խոստումը կ'ըլլայ Աբրահամ, թագաւորութիւնը չլիցցնել կը խոստացուի Դաւիթ, իրը ազնուականագոյն ինչ. (Հմմ. Ես. Ծա. 2.—Դ. Թագ. Ը. 49.—Ի. 6 ևն.): «Բազում փառք էին առնն և յԱստուծոյ և ի մարդկանէ» (Ոսկ. Ի. Բ.). ոյր վասն Մեհիայն հասարակօրէն «Ողբի Դաւթի» կ'անուանուէր, իրը իւր մակդիր. (Հմմ. Մատթ. ԺԲ. 23, ԻԱ. Գ. ԻԲ. 42. Յովհ. Է. 42. և այլուր): «Դաւիթ... եղիւ անդրանիկ քաղաւորացն Իսրայէլի և անուանեցաւ իայր Ողբոյն Աստուծոյ» (Ա. Ղեւնդ. երէց յեղիւնէ, Տպ. Վենետ. 1852, էջ 190):

6. Ազգահամարը չյիշէր զԻսայէլ ու զԵսաւ. քանզի ասոնք ցեղընտիր զաստուած էին Քրիստոսի նախնիքներէն, և այլեւայլ ազգատոհմներ կազմած՝ կռապաշտ և միշտ հակառակորդ Իսրայէլացւոց. նա մասնաւորապէս Եսաւ իւր յանցանքովն կ'արնցուց ծախեց ու մեղքեց զանդրանկութիւն, իսկ Յակոբ՝ Աստուծոյ շնորհելովը, իր մօրը ճարպկութեամբը, եղբորը հաւանութեամբը, առաւ նոյն անդրանկութեան կամ Քրիստոսի նախահայրութեան իրաւունքը։ Ընդհակառակն կը յիշուի Զարա որ իւր ծննդեան նախնիամական պարագայներով պէտք էր յիշուիլ (Ծնն. ԼԸ. 27-30): Նոյնպէս Յուդայէն զատ, որուն Մեհիայի փառաւոր խոստումներն եղան (Ծնն. Խթ. 40. Հմմ. Երբ. Է. 44), կը յիշուին նաեւ Յուդայի եղբարք յընդհանրի, որք Մեհիայի թա-

գաւորութեան երկոտասան մասերը կը կազմէին, որ թիւը Աւետարանի մէջ, մանաւանդ թ Յայտնութեան, խորհրդաւոր նշանակութիւն մը առաւ:

7. Մենդարանութեան մէջ կը յիշուին նաեւ կանայք ոմանք, հակառակ Հրէից ծննդաբանական կանոններուն, և յիշուողներն չեն այն սինայք՝ սրբութեամբ և ազնուատոհմութեամբ երեւելիք, ինչպէս Սառա, Ռեբեկա, Լիա, Էն., այլ այնպիսի կիներ, որոց ոչ գովելի ընթացքը Ս. Գրոց մէջ կը պատարակուի. Թամար (Մհն. ԼԲ.), Հռաքար (Բահար Քանանացին) (Յեսու, Բ. 1.—Հմմ. Եբր. ԺԱ. 34), Հռութ, (Մովարացին), Բերսաբէ: Ինչ է ասոնց պատճառը կամ պատճառները. 1. Արդէն «Ամենեֆեան ընդ մեղօք էին» եւ նոքա եւ նախնիքն... յայտ է թէ ամենեֆեան մեղան եւ հարկ լինէր այնուհետեւ Քրիստոսի գալստեանն» (Ոսկ. ձ. Գ.), որ արդարացոյց գամէնքը: Իսկ յիշեալ մեղաւոր կանայք գրեթէ առ հասարակ դարձան առ Աստուած և ի սուրբ կրօնս, ինչպէս ապա և Մագդաղենացիներ, և ոչ ևս կը յիշուին չարիքն առաջի Աստուծոյ, այլ միայն բարին:—2. Աւետարանիչը ուզեց ցոյց տալ որ Քրիստոս կուգար «փրկել իւր ժողովուրդը իրենց մեղքերէն», ոչր վասն և խոնարհեցաւ նախամայրեր ունենալ մեղաւոր կիներ՝ նա որ «ընդ մեղաւորս համարեցաւ», «Զի նա որ վասն մեղաւորաց եկեալն էր, ի միղաւոր կանանց ծրմեալ, զամենեցուն զմեղս ջնջեացէ» (Ս. Յերոն.). «Վասն այնորիկ իսկ եկն» ո՛չ զի փախիցէ ի մեռոց նախասանացն, այլ զի եւ ի մէնջ եւս բարձցէ» (Ոսկ. ձ. Գ.). ինչպէս որ՝ ո՛չ միայն ծնաւ, այլ ծնաւ ի գոմի և դրուեցաւ ի մաւր. ո՛չ միայն մեռաւ այլ և նախատալից խաչուեցաւ իբրեւ չարագործ: 3. Օրինակ եղան անոնք Քրիստոսի Հարսին՝ Ս. Եկեղեցւոյ, որ, յանհաւատից և ի հեթանոսաց միացաւ նմա «սուրբ եւ անգրաս»:

(Շարունակելի)

Գ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՆԳՂԻՈՅ ՀՍԻԱՏԲԸ

Հոկտ. 22ին Ս. Քահանայապետն մեր Պիոս Ժ. իր ունկնդրութեան ընդունեց Անգղիայէն եկած շուրջ հինգ հարիւր ուխտաւորները: Անոնց կ'առաջնորդէր Լոնտոնի մէջ Ուէսթմինսթրի Արքեպս. ծիրանաւոր Փր. Պէօրն, այր հանճարեղ, հեղահոգի եւ առաքինազարդ. միասին եկած էին նաեւ Պիմինկէմի արքեպ. Այլզլի, Սառուօրքի եպ. Ամիկտ, Շրիւզպէրիի եպ. Սինկլիքն, Բօրսմըթի եպ. Գօթթըր, Բլիմըթի եպ. Քէյլի, Հէքլամի եպ. Գալլինս եւ Էմմաուսի տիոդ. եպ. Սթանլի: Նոյնպէս ի միասին եկած էին բարձրապատիւ դուքսն Նորֆոլքի՝ անզղ. Թագաւորներուն Թագադիրը, եւ անոր հետ բազմաթիւ բարձր պաշտօնատարք եւ պատուարժան մեծամեծք յերեւելի ընտանեաց, ինչպէս Ուայթ, Սթիւլըրտ, Սթաֆֆօրտ, Ուէճփուտ, Էն. Էն., որոնք օր քան զօր նորանոր դարձերով կը ստուարացնեն կաթողիկէ խումբն յԱնգլիա: Երբ Սրբազանը բազմեցաւ դահուն վրայ, Կարգ. Պէօրն պեղեցիկ ուղերձ մը խօսեցաւ յիշելով Ս. Պապին բարեացակամութիւնը հանդէպ Անգլիոյ

կաթող . յողովրդեան , որոյ ապացոյց մ'եղաւ տարի մը առաջ Միացեալ թագաւորութեան կաթող . Եկեղեցւոյն նուիրապետութեան հոգիարար գրութիւնը եւ ակտոններու յաւելումը : «Եկած ենք , ըսաւ , Ձեր Ոսից առջեւ՝ եպիսկոպոսունք , քահանայք եւ հաւատարմաբար՝ փափաքելով ճշման զՊետրոս , ինչպէս մեր նախնիք , որոնք ամենահեռաւոր հնուքեան մէջ համբողջութեան ամենամեծ ներդրութիւններու հանդուրժելով եկան այս քաղաքը յորում կը ճանգչին ամենեւեմեալ Առաքելոց մարմինները , եւ յիշում Յաջորդին կը մեծարուի երկնային դուռներու իշխանը» . — Անգղիոյ առ Ս . Աթոռն այս դարաւոր ջերմոտանդութեան՝ ի մէջ այլոց եղուարդ խոստովանող թագաւորին օրինակը յիշեցուց որ սխալ ըրած ըլլալով հանդերձ , Հոգւմ երթալ չէր կրցած , եւ երբ Լիւնոն թ . Քահանայապետը այս ուխտը անօրինեց , նա երախտագիտութեան ի ցոյց Ուէսթմինսթրիի այն հոյակապ եկեղեցին յորում թագաւորները կը պապուին եւ յորում Անգղիոյ երեւելի մարդոց սպերք կը հանգչին , նուիրեց Ս . Պետրոսի անուան : «Հազար տարի տարւոյն մեր եկեղեցին սերտի միացած մնաց այս Ս . Աթոռի . անկէ՝ ծծեց վարդապետութիւնը , անկէ՝ իշխանութիւնը . անկէ՝ բարեկարգութիւնը : ... Ամբարշտութիւնը այն մարդուն որ զինք կ'անուանէր պապական հաւատոյ , եւ աստուծային ու մարդկային իրաց խառնակութիւնը , չկրցան Անգղիոյ եկեղեցին կորզել ու բոլորովին բաժնել իր գլուխէն . այգին ուրիշներուն չտուեցաւ . եւ Ռոչեսթերի Յովնաննէս եւ Թովմաս Մուր երանելեաց եւ ուրիշ նշանաւոր անձանց քահանայապետական գերիշխանութիւնը պաշտպանելու մէջ ցոյց տուած հաստատման արիւնքեամբ՝ ուրիշ մարտիրոսներ եւս երեւան եկան , որոնք բոլոր մեռան «ուրիշներու յանձնելով կենաց կանքեղը» , որուն պայծառութեամբ այսօր մենք կը շնորհակցենք : — Կարդ . յիշեց թէ ի՞նչպէս Անգղիոյ եպիսկոպոսը սահմանած էին ամէն տարի նորոգել իրենց հայրենիքին առ Ս . Պետրոս նուիրումը եւ ըսաւ թէ իրենք այս պարտքը կը կատարեն . «Ուրիշ ի՞նչ կը մնայ մեզ , Սրբազան Հայր , եթէ ոչ իյնալ ու փարիլ Ձեր ստեղծութեան ճշմանը զՊետրոս , մեծարելու զՊետրոս , ըսելու Ձեզի քե կը սիրենք զՊետրոս , Ձեր առջեւ դնելու մեր հաւատքը , յարգանքն ու սիրտը , որպէս զի Ձեր այնքան գորովալիւ հայրախնամ գութն որ զմեզ կը բերէ առ Ձեզ , նոյնքան արդիւնաւոր ըլլայ մեզի որ մարտիրոսներու սերունդ ենք : Տա՛յ Աստուած որ մարտիրոսութիւնը եթէ պակաս է , գոնէ մարտիրոսաց հոգին վերակենդանանայ ի մեզ : Քանզի ո՛րքան որ ժամանակները անցանելի են , այնքան աւելի պէտք է հզօրեղապէս եւ փոյթեղանդան աշխատենք պահպանելու եւ տարածելու մեր Ս . հաւատքը :

Յետոյ Բարձր . Դուքան Նորփոլքի եւս յառաջանալով ուզեց ինչ ալ ան խօսեցաւ ի նշան հաւատարմութեան եւ սիրոյ առ Ս . Աթոռն որ «Լուսաւոր փարոս է՝ Աստուծայնապէս բարձրացած այս աշխարհիս

խաւարին մէջ» : Նորոգեց այն բոլորը զոր Կաթողիկէ Անգղիա ի սկըզբանէ անտի ըրած է Ս . Քահանայապետութեան անկախութեանը համար , բոլոր մը որ երբեք պիտի չլուէ : արեւք է որ Ս . Աթոռը ազատօրէն Կաթող ըլլայ ի գործ դնել իր աստուածատուր իշխանութիւնը : Այս անկախութիւնը ամենամեծ զիւանագէտներէն ընդունուած է արդէն , իր քաղաքացիական ամենաէական սկզբունք . «Եւ վստահ ենք որ օր պիտի գայ յորիւմ այս սկզբունքը՝ ժամանակներու պահանջանաց յարմարութեամբ նորէն պիտի ճանչցուի ընդհանրապէս» :

Սրբազան Հայրը խանդավառանօք պատասխանեց երկուքին ալ , շնորհակալութեամբ , հայրական յորդորներով եւ սրտազին օրհնելով զիրենք եւ ամբողջ Անգղիայ Կաթողիկէները :

Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ (*)

Այս ընդիրը լաւ կերպիւ մը կ'ուսուցանէ աստուածութեան ու մարդկութեան միութիւնը Քրիստոսի միակ անձին վրայ , բայց չըսեք մեղիքէ ի նշուէս եղած է այս միութիւնը : Ուրիշ անցք մը գեղ քիչ մը աւելի կը պարզէ խորհրդոյն քօղը . «Ինք Աստուծոյ կերպարանքն ունենալով , յափշտակութիւն չսեպեց Աստուծոյ հաւասար պատիւ ունենալը , այլ ինքիւր անձը մերկացուց՝ ստրուկի կերպարանք առնելով , ու մարդոց նման ըլլալով» : (Փիլ . Բ . 4—7) : Այժմ ապացուցուած կը նկատենք հետեւեալ կէտերը : Աստուծոյ կերպարանքը աստուածային բնութիւնն է , ստրուկի կերպարանքը՝ մարդկային բնութիւնն է : Ինքզինքին մերկացումը տեղի կ'ունենայ սա իրողութեամբ որ , Քրիստոս իր յաւիտենից ունեցած աստուածային բնութեան վրայ կը յաւելու մարդկային բնութիւնը զոր ի ժամանակի կ'առնու : Ուրեմն միեւնոյն ենթակային , միեւնոյն անձին Քրիստոսի վրայ կը գտնուի երկու բնութիւն , մին աստուածային , միւսը մարդկային : Քանի որ աստուածային բնութիւնը անշարժ է , եւ այլուստ ապացուցուած է թէ Քրիստոս զայն կը պահէ , ինքզինքին մերկացումը չի կրնար կայանալ այս բնութեան լքման կամ նուազացումն մէջ : Եթէ ինքզինքին մերկացումը ուրիշ բան կը նշանակէ՝ քան նուաստացում , ոչնչացում , արդիւնք՝ Բանին կոզմէ ստորին բնութեան մը լարձրացման , չի կրնար ուրեմն ուրիշ բան մը ըլլալ՝ քան ինքնակամ լքումը աստուածային պատիւներուն՝ որոնց իրաւունք ունէր Քրիստոս իր մարդ , եւ զոր կրնար պահանջել իր անձնաւորութեան իրաւամբը : Հերձապէս մարդկային բնութիւնը կուլ տրուած չէ այս միութեան :

(*) Տեա թիւ 64, էջ 561 :

թեան մէջ, զի Քրիստոս արդեամբ ճշմարիտ մարդ կը մնայ, եւ իբր մարդ ալ ճանչցուած է իր արտաքին ձեւերով որ չեն խաբեր ու խոնարհ, հնազանդ եւ վշտալից կեանքի մը ամբողջ շրջանովը:

Անշուշտ, կը յիշուի թէ այս անցքը լաւ հասկցուած չըլլալով, ինչպէս ծնունդ տուաւ Բեթղէմի լուսածալ աշխարհի հերետիկոսութեան՝ որով մէկ դարէ ի վեր վաթիւրուած է ազատական բողոքականութիւնը: Սնոր պատասխանատուն Լուտեր է. զի, մերժելով աւանդութիւնը, ան բացարեւ Քրիստոսի մարդկութեան վերաբերեալ սոյն անցքը, սա պատուակով թէ Բանը չէր կրնար ինքզինք մերկանալ: Բեթղէմի արդի հետեւորդները կը պնդեն հասարակ կարծեաց համաձայն, թէ այն անցքը կը վերաբերի նախագոյ Քրիստոսի, ու կը հետեւցնեն Լուտերի հետ՝ թէ Բանին ճշմարիտ մէկ նուագումը կ'ենթադրէ այն անցքը: Ստորագրելներու հաղորդման նկատմամբ իր երեւակայած սխալ մէկ գաղափարին համաձայն, Լուտեր կը մտածէր որ, Քրիստոսի միակ անձին վերագրուած ստորագրելիները՝ անոր աստուածային կամ մարդկային բնութեանց համաձայն, իրական յատկութիւններ մ'էին այս երկու բնութեանց ալ յատուկ՝ եւ թէ Քրիստոսի մարդկութիւնը, իբր մարդկութիւն, պէտք էր ունենալ ուրեմն ամենակարողութիւնը, ամենագէտ գիտութիւնը, ամենուրեք գտնուելու կարողութիւնը: Լուտերի հետեւորդները այս արտառոց վարդապետութենէն մէկ մաս մը միայն ընդունեցան. ու բնաւ չհամարձակելով մարդկային յատկութիւնները վերագրելու Քրիստոսի աստուածութեան, շարունակեցին աւելի եւս ճոխացնելու սակայն անոր մարդկութիւնը աստուածային յատկութիւններով: Նոյն իսկ այս վերջնոյն համար ալ հերձուած մը յառաջ եկաւ. ըստ տմանց՝ Քրիստոսի մարդկութիւնը իրապէս զանոնք ունէր արդէն. բայց կը ծածկէր, ըստ ալլոյ՝ իրաւամբ զանոնք ունէր. բայց կամովին մերկացած էր ինքզինք անոնցմէ:

(Շար.)

Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Մ Ե Ծ Թ Ա Փ Օ Ր Ը

Սեպտեմբեր 15ի այգը ծագած էր վերջապէս. բայց աւաղ որ երկնակամարը մութ ու ամպրոպալից ամպերով բեռնաւորուած կը մնայ միշտ: Երէկուքնէ աւելի տխուր կը դուշակուի օրը: Անձրեւը շատ չուշանար. հրապարակներու մէջ, փողոցները, տանիքներու վրայ շար ի

չար շեղջակութեամբ անաղին երկիւղած ամբոխի մը ամէն յոյսը ի դե-
րեւս հանելու։ Առուակներ ու հեղեղներ կը ձեւանան ընդհուպ փողոց-
ները։ Բայց ամբոխը չի ցրուիր, ա՛լ աւելի կ'ստուարանայ, եւ ակնկա-
ռոյց, չնչանգձ կը նայի պիչ Ս. Ստեփանոսի աշտարակին կատարը՝ ուր,
կանխաւ եղած զեկոյցի մը համաձայն, պիտի ծփան չորս սպիտակ դրօշ-
ներ՝ իբր նշան թափօրի սկսելուն։

Կայսեր հարցուցին թէ ի՞նչ կը հրամայէր. նա կրօնային վեհու-
թեամբ ըսաւ. «Եթէ զօրանց կաթարեիք ըլլայի, ե՛ս պիտի մնար անձրեւի
համար. պիտի ըլլա՛յ թափօրը»։

Հօֆպուրկի կայսերական պալատը ամէնէն վեհ ու փառաւոր տե-
ռարանը կը պարզէ այս պահուս։ Բայց ոչ ոք ուշադրութիւն կ'ընծայէ
անոր։ Մէկէն չչնկոց մը ծայր կուտայ ու հետզհետէ կը տարածուի ծուփ
ի ծուփ այդ անաւոր բազմութեան միջեւ. քառակ զրօշներն էր որ
սկսած էին հեղեղօրէն տեղացող անթափանցիկ չղարշին մէջէն մթնշողել
իրենց ձիւնաթոյր ծալքերը։ Խումբերն ու ենթախումբերը կը հասնէին
արդէն ամէն տեղէ, ու կը տեղաւորուէին հեւ ի հեւ պալատին առջեւ
կառուցուած բարձրագիւր բեմերուն ու աստիճաններուն վրայ, ներքնա-
բակը գտնուած երկու վիթխարի այրուծիւղոր արձաններուն ճակատը։

Աջ կողմի հոյակապ դրան վրայ կանգնուած կայ հիանալի խորան
մը՝ համակ ոսկիէ, սաղարթներէ ու զրօշակներէ, ուսկից պահիկէ մը
պիտի ճառագայթէ Գրիստոս։

Անձրեւն հետզհետէ աւելի անհամբերութեան ու անձկութեան կը
մղէ բազմութիւնը՝ իր սպասումին մէջ իրար խառնուած տանելու երկրի
մեծվայելչութիւններն ու երկնից Արքան, առաջինները խոնարհու-
թեամբ երկրպագելով այս վերջնոյն առջեւ։ Ու թափօրը կ'անցնի վե-
հօրէն այս ջերմեռանդ զանգուածներու մէջէն՝ որ ձեւացած է երկրի
վրայ գտնուած ամէն ազգի ժողովուրդներէ, ընկերակցութիւններէ ու
յեղերէ։

Ամէն վաշտի զօրքերէ կազմուած ցանցերուն մէջէն, վաշտեր՝ զորս
այնքան ազնուութեամբ Կայսրն ու նախարարները աստուածային պաշ-
տաման յատկացուցած են, զի շատերու համար իրք կիրականօրեայ պա-
տարագի պարտաւորութիւն պիտի սեպուի այս թափօրն, ինչպէս ցոյց
տրուած է եկեղեցական իշխանութիւնէ վաւերացուած ծրագրին մէջ,
ամէնքն ալ կարգաւ կը յառաջանան Յեղեղեոյ պաշտպան զօրքերու
նման, յաջորդաբար կ'անցնին ու կ'անցնին Թիրուցի եւ Մաճառներ,
Խրուաթ ու Սլովէններ, Ռումանացի ու Սերպեր, Ռուս ու Բօթնու-
գալցիներ, Գերման ու Շուեդացիներ, Սպանիացի ու Իտալացիներ,
Ճրանսացի ու Անգլիացիներ, Սլովագ ու Չէքեր, ամէնքն ալ սերտ միա-
ցած ազօթքի ու երգի մէջ, իրապէս ձուլուած իրար՝ Ս. Հաղորդու-
թեան Խորհրդոյ զօդիչ մտածումով, ամէնքն ալ մղուած անթիւ նուա-

գախումբերու գեղգեղներէն՝ որոնք համահաւասար կ'եղանակեն թէ՛ կրօնական ու թէ՛ ազգային մեղեդիներ . ամէնքն ալ յառած աչքերնին այն դրօշակներուն՝ որոնք օտար հողի վրայ անգամ միշտ ներկայ կ'ընեն հայրենիքը . ամէնքն ալ բաղմնեղ տարազներով զարդարուն , տարազներ որոնք հազարումէկ կերպիւ կը տարբերին իրարմէ , եւ դորտ նախնիք անայլայլ պահել սովորեցուցած են իրենց , ինչպէս սովորեցուցած են՝ իրարու հաղորդելու աւանդութիւններն իրենց պատմութեան ու հաւատքին :

Այս բազմացեղ բազմնրանգ ազգութեանց միջեւ խիստ զգայացունց համայնականար մը կը կազմեն մասնաւոր թիրոջիք : Զի անոնց ամէն գիւղերն ալ խնամով ընտրած են իրենց պատուիրակները , քաջակազմ ու յաղթհասակ մարդիկ ամէնքն ալ , որոնց մէջ կը տեսնուին անմօրուս պատանիէն սկսեալ մինչեւ հերաթափ ծերը սպիտակ բուսակայներով ու երկնազան բաճկոնակներով , փետրաւոր գլխարկ մը գլուխնին եւ հնօրեայ սփփեք հրացանը ուսերնին կարգաւ կը յառաջանան անոնք՝ թիրոջեան ծանօթ արուեստով փայտաքանդակ ահագին խաչերութեան մը ետեւէն , խաչելութիւն մը՝ զոր վեր բռնած կը տանին իրենց ցեղին ամէնէն քաջակազմ ու յատկանշական մարդիկներէն ութ կամ տասը հոգի . խաչելութիւն մը բիւզանդական ոճով՝ որն որ հակառակ իր գլխուն վրայ ունեցած կայսերական ոսկի թագին կը տառապի զարձեւալ . պատմական խաչելութիւն մը՝ զոր ամէն ատեն անոնք սովոր էին ճակատամարտներու մէջ առջեւէն կրել . եւ ի մասնաւորի ԺԸ-րդ դարուն՝ երբ Յրանսացիք թիրոջ արշաւեցին :

Կարելի չէ մէկիկ մէկիկ յիշատակել հոս ամէն ազգութիւններու եւ ընկերակցութիւններու կազմած խումբերը : Հո'ն է նաեւ Յրանսայի դրօշակած պաշտօնական խումբը , ասոնք ալ կը հետեւին իրենց եռագոյն դրօշակին . դրօշակ մը՝ զոր կարելի չէ Յրանսայի մէջ գործածել կրօնական ցոյցերու պահուն : Բայց զարմանալի անհեթեթութեամբ մը , մինչ Փրանսական Հանրապետութիւնը կը թոյլատրէ իր դեսպանին եռագոյն դրօշակն ալ միասին տանելու թափօրի պահուն , այլուստ խստիւ կ'արգելու անոր՝ որ չծփացնէ զայն , եւ ահա միակ դրօշն է այն՝ որ այս պահուս ստանց պարգուելու կը տարուի , կարծես սոսկում կ'զգայ երկրպագելու անոր՝ զոր կայսերական մեծվայելչութիւններ կ'երկրպագեն :

(Շարունակելի)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ր Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ս. Քահանայապետն մեր Պիոս Ժ. 44 Սեպտեմբրի Տրատարակեց նոր Առաքելական Սահմանադրութիւն մը, որով՝ յաճախակի Հաղորդութիւնը աւելի ընդհանրացնելու մտք թոյլ կուտայ հաւատացեալներուն ու է ծէսով հաղորդուել: Յառաջիկային այս Սահմանադրութիւնը ամաղջութեամբ մտադիր ենք հրատարակել, մանաւանդ անոր համար որ մեզ բազմաձէս Արեւելիցիներու համար մանաւորապէս կարեւորութիւն ունի: Առ այժմ՝ յառաջ կը բերենք վճռած սահմանները. «Խորհելով որ թէ՛ բաժարջ և թէ՛ խմորեալ հացին սրբազործութեան ուղղափառ հաւատքն ապահով է յաւանդուն համար, դարձեալ ակնդրեա տեսնելով թէ խառն ծէսի արգելքը թէ՛ Լատիններուն, թէ՛ Արեւելցոց ձանձրոյթ և տգիտութիւն պատճառած է... պատշաճ կարողութեամբ Ս. Հաղորդութեան գործածութեանը մէջ խառն ծէսը խափանող կամ անհարգ ամէն վճիռները ջնջել. և թոյլ տալ ամենուն՝ ըլլան Լատին, ըլլան Արեւելեան, որ կարենան ուղղափառ քահանաներէն ու իցէ ծէսի ուղղափառ եկեղեցիներէն: Մէջ բոս վաղեմի սովորութեան Եկեղեցւոյ Ս. Մարմնոյ Տեսուն Խորհուրդն ընդունել, որպէս զի «Ամէն և իւրաքանչիւր անոնք որ քրիստոնէայ անունը կը կրեն, համաձայնութեան այս խորհրդանշանին մէջ վերջապէս անգամ՝ մը միանան ու համաձայնին»: (Ժող. Արեղ. նիստ Գ.):

«Ուստի, կ'ըսէ. զօրութեամբ և լրութեամբ Առաքելական Իշխանութեան կը սահմանենք ու կը հրամայենք:

Ա. Քահանայից թոյլ տրուած չէ պատարագել խառն ծէսով. ուստի իւրաքանչիւրը պէտք է որ Ս. Գոհութեան խորհուրդը կատարեն ու մատակարարեն իրենց Եկեղեցւոյն ծէսովը:

Բ. Հարկաւորութեան պարագային, կամ եթէ ալլածէս քահանայ մը չգտնուի. թոյլ տրուած է արեւելեան քահանայի մը՝ որ բաղարջ կը գործածէ, խմորեալով սրբազործուածը լաշխել. իսկ այս բաշխման մէջ իւրաքանչիւրն իր արարողութիւնը պիտի պահէ:

Գ. Ու իցէ ծէսի ամէն հաւատացեալներուն թոյլ կը տրուի որ առ ջերմեան գոլութեան իսկ ու իցէ ծէսով սրբազործուած Ս. Հաղորդութեան խորհրդոյն կարող ըլլան մերձեցնալ:

Դ. Որ և իցէ հաւատացեալ Զատկական Հաղորդութեան պարագը կատարած պիտի ըլլայ միմիայն եթէ իր ծէսովն ու նոյն իսկ իր ժողովրդապետէն հաղորդուելու ըլլայ որուն հպատակ կը մնայ նաեւ կրօնական ուրիշ բոլոր պարտքերու կատարմանը մէջ:

Ե. Մահամերձներն Ս. Թոշակը պէտք է առնուն սեփական ծէսով իրենց Ժողովրդապետին ձեռքէն. բայց ի պահանջել հարկին օրինաւոր պիտի ըլլայ ընդունել զայն ու իցէ քահանայէ. որ սակայն իր ծէսովը պիտի մատակարարէ:

Զ. Իւրաքանչիւր ոք իր բնածին ծէսին մէջ պիտի մնայ թէեւ վաղուց օտար ծէսով հաղորդուելու սովորութիւն քրա՞ծ ըլլայ. և ոչ ումեք թոյլ տրուի ծիսափոխութիւն եթէ չունենայ արդար և օրինաւոր պատճառներ զորս պիտի կշռէ ու դատէ Ս. Ժողովն Տարածման հաւատոյ վասն գործոց Արեւելեաց: Իսկ այս պատճառներու մէջ ի հաշիւ պիտի չառնուի օտար ծէսով հաղորդուելու սովորութիւնը՝ թէեւ երկար ժամանակեայ ըլլայ»:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Երեցս երանեալ Ս. Յովհանն Ոսկեբերան Հայրապետին սոսկին առթիւ իւր համանուն մեր եկեղեցւոյն մէջ մասնաւոր արարողութիւններ կատարուեցան՝ առթիւ օրրանցեալ Երեքշաբթի. և երէկ՝ Ուրբաթ, Արթիւթիւ՝ Արեւիկայի զրոյն հայա՝ ի բազմոցի, և վաղը երեկոյն քարոզէն վերջը պիտի կատարուի հանդիսաւոր թափօր և Օրհնութիւն:

Գեր. Մկրտիչ Վ. Արղարեանց, նախկին փոխան Մեծաւոր Հովմար Լեւոնեան հայ վարժարանին, Պալիս հասաւ անցեալ կիրակի օր և ուղեւորեցաւ ի Պաթում, երթալու համար ի Թիֆլիզ, ուր պիտի պաշտօնավարէ Ռուսիոյ Կաթողիկէ Հայոց բնդհանուր կառավարիչ Գեր. Սարգիս Գերապոյժան Տէր Արիահատեանի քով:

Զմամառու վանքին Մեծաւոր Գեր. Գր. Ս. Վ. Աշրգեան ծանոյց ան Ամեն. Հոգեւոր Տէր Թէ վախճանեցաւ ի Զմամառու վանքացւոր Տ. Տիմոթէոս Վ. Պաղտիկեան, Ամենայ. և Գերեջ. Հոգեւոր Տէրն առանձինն շրջաբերական գրութեամբ ծանոյց անոր մասը ըստ Զմամառեան միաբաններուն որպէս զի ըստ կանոնաց աղօթից նպաստներ յատկացնեն ի հանգիստ հոգւոյ հանգուցելոյն Ամսոյ 8ին Ն. Տ. հանգիստաւորապէս կատարուեր է քահանայաթաղ յուղարկուորութիւնը՝ ներկայութեամբ հինգ եպիսկոպոսներու և յիսունէ աւելի քահանաներու, հայ և մարմնի արքեպիսկոպոսութեամբ, ճարտարահիւս դասնական մը խօսեր է Գեր. Խուրի Խաչատրիան, շատ հայասէր գիտնական վարդապետը, Գրեմի վանականներէն:

Հանգուցեալը ծնած է ի Բրգնիք ի 1849, և Զմամառ գնացեր է ի 1862: Քահանայութեան Ս. Աստիճանին բարձրացած է ի 1872: Զմամառու կղերանոցին մէջ և Ս. թուր վերակացութեան պաշտօն վարած է 1875—1896: Այս թուականէն վերջը խօթացած ըլլալով, ոչ հայրենեաց և ոչ Զմամառու օղէն բնաւ օգուտ մը չէ բերած, այլ օրինակելի համբերութեամբ տարած է վշտերուն և ամենայն համակամութեամբ Աստուծոյ ձեռքէն ընդունից մահը և հանգեաւ, վերջին հոգեւոր փոխարեութիւններով և Ս. խորհուրդներով զօրացած:

Մեր խորին ցաւակցութեանն էր Զմամառեան արդիւնաշատ Միաբանութեան անդամներուն:

ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Կիրակի առաւօտ յանկարծական մահուամբ վախճանեցաւ Գեորգ եպ. Երեցեան որ դեռ հազիւ 60 տարեկան էր: Իջմ. Նուիրապետութեան ամենէն ուսեալ, ազնիւ և համակրելի դէմքերէն մին էր: Կիրակիոյ կաթողիկոս ընտրուեցաւ, սակայն Օրմանեան պատրիարքի հետ շփարենալով՝ յարմարելի մերժեց. յետոյ երկուքին միջեւ չարաչար ձգտում մը սկսաւ, որ մինչեւ հալածանքի ձեւեր նստաւ: Ազատութեան հռչակումէն վերջ վստ ամբաստանութիւններով աղատաւորեցին ղինքը և օրինաց ձուլորան եղող այն արդար Երեմի. Ժողովը քանի մը տարեէ ի վեր լիցուց բարձրաստիճան եպ.ի մը ամենակարեւոր դատը, զոր հիմա մահը կը լուծէ: Հայր անողութիւն է իր հետապնդումին մէջ, միշտ գերադրական՝ գովութեան և պարստատնքի մէջ: Եղբարեան է այդ մահը, զի այս կորովալի մարդը բնիճեցաւ այս անորակելի հալածումէն և սիրտը խամրեցաւ յանկարծ: Իր մահէն վերջը հիմա կուգայ զգլու՜մ, յարգանքալմախ, — որ ցաւազին յիշատակ մըն է միայն — Գոնէ այս ամէնը Զմամառու օրինակ ըլլար:

Անցեալ Երեքշաբթի օր՝ ամսոյս 13/26ին վախճանեցաւ Յունաց Պատրիարք Տ. Եռաբիմ Գ., իր 78 տարեկան հասակին: Յոյն պատրիարքաց շարքին մէջ երեւելի տեղ մը կը գրաւէ անշուշտ իր բարձր ձիրքերովն ու բարեմասնութեամբք. համակրելի, արթուն, ժիր, գիտնական, վեհանձն, կորովի գործունէութեամբ և անձնանուէր, Արեւելքի յեծարելի, հազուադէպ դէմքերէն հանդիսացաւ ու մեծամեծ ծառայութիւններ մատուց իր ազգին: Կարի ցաւալի է իր կորուստը: Առաջին անգամ Պատրիարք եղած էր 1878էն ց 1884, և Համիտեան քաղաքականութեան բերմամբ քաշուած մնաց Այսօրոյի վանքին մէջ մինչեւ ց 1904 երբ կրկին Պատրիարք ընտրուեցաւ և մնաց մինչեւ իր մահը:

Մենապատիւ և Դերերջ. Հոգեւոր Տեսաւն կողմանէ ցաւակցութիւն յայտնելու համար Դժ. օր Յունաց Պատրիարքարան դնացին Արհի. Մատթ. եպ. Սիպեան և Գեր. Յակոբ Վ. Մողարեան և պատրքին. փոխանորդին և Սինոդականաց կողմանէ սիրալիր կերպով ու երախտապարտութեամբ ընդունուեցան մեծ սրահին մէջ:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Դեռ պատերազմը չվերջացաւ. Հաշտութեան իրր նախաքայլ զինադադարի բանակցութիւնները թէեւ սկսան, սակայն երկուստեք նշանակուած բանագնացիները Պախչալիչ գիւղին մէջ քանի մը անգամ զուամարումներ ունենալով չկրցան համաձայնութեան գալ՝ մանաւանդ Էտիրնէի անձնատուութեան մասին զոր իրր առաջին պայման կ'առաջարկէին Պուլկար պատուիրակները:— Ա՛րսուի թէ Պուլկարիները 50 հազար նոր զօրք կը դրկեն պատերազմի դաշտը. նոյնպէս և Հէլլէններն ու Սեոպերը բանակ ստուարացնելու համար: Որչափ կ'երեւի, դեռ պատերազմը պիտի վերսկսի ու տեւէ ժամանակ մըն ալ: Այս միջոցին սակայն հաշտութեան բանակցութիւններու ալ պիտի ձեռնարկուի: Այս վախճանաւ Բէշիտ և Հըմնտ պէյեր ուղղափառ ռազմաւորած և բանակցութիւններն սկսած են Պուլկարիոյ հետ Յաջողութեան յոյսը քիչ է:

Պատերազմի մէջ Հայերու ցոյց տուած հաւատարմութեան և քաջութեան վրայ շատ մեծ գովեստներով կը խօսին թուրք սպայք և զօրականք. նոյն իսկ սպարապետի փոխանորդ և պատերազմական նախարար Նադըմ փաշա մասնաւոր հեռագրով մը յայտ մասին մեծ գրուատիքներ բռաւ դեռ անցեալ օր ի բռաւ. «Հպարտօրէն կը յայտարարեմ թէ հայ զինուորները իրենց զինուորական և հայրենասիրական պարտա-հանութիւնը կատարեցին ամենայն հաւատարմութեամբ»:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Տէր Կոմիսսս Բահանայ	673
Աւեսարանի մեկնութիւն	677
Կարողիկէ Անգղիա	680
Ս. Պողոս եւ Քրիստոս	682
Ս. Հաղորդ. Համագգ. Համաժողով ի Վիեննա	683
Տեղեկագրական	686

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱԳԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Արձագանգ Շաքաքաքեթի, Բեռա, Պայրամ փողոց թիւ 6 Վ. Պոլիս

Թերթիս Երկրորդ տարին պիտի աւարտի յառաջիկայ Դեկտեմբեր 31ին, ու Երրորդ տարւոյն պիտի թեւակոխէ 1913 Յունուար 1ին, աւելի խնամուած եւ աւելի հոխ բովանդակութեամբ:

Բաժանորդագրութեան պայմաններն անփոփոխ կը մնան. հետեւապէս կը հրապարակուին փոփախողները որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ ց1 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատեն առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալիքն ամէն այն բարեացակամ անձերու, որոնք այս տարւան շրջանին մէջ հանեցան գրաւոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուռնապալիք զոհունակութիւնն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չխնայուի ու եւ իցէ զոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կաթողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր սիրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէն մի հեմարիտ կաթողիկէ անհատ իւրովսանն աշխատի *Արձագանգի* ծառայութիւնը:

Հրատարակուեցաւ «Տարրական սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոքրիկ տպարան համար, հաստատեալ Հոգեւոր Իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեան ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոճոյն շնորհիւ դպրոցականներու ամենէն օգտակար եւ յանձնարարելի գրեթէ մըն է անհրաժեշտ:

Դիմը անհամեմատ կերպով աման է. ամուր թղթակագիր՝ 2 դահեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց թիւ 5:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար սարեխան	Դնկն. արծ.	40
Վեցամսեայ	» »	20
Արսասահման	Տարեխան Զրակ	10
»	»	5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա Բոսով
եւ կամ մէյ մէկ դրուցնոց նամակադրոճով

Մէկ թիւ 1 Դահեկան

Նպմակ, յօդուած եւն. կը դրկուին Խմբագրութեան հասցէին

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Է Ա Ր Ձ Ա Դ Ա Ն Գ

Բերա, Պայրամ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

KATOGHICHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

- ԾԱՆՈԹ.**— 1.— Ահազանց կը նրասարակուի Շարաք օրերը:
- 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նրասարակել իրեն դրկուած ա եւ է յօդուած:
- 3.— Կեղծանունով դրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
- 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
- 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթի թուղթին մէկ կողմը միայն:
- 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:
- 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրոճով միասին դրկել: